ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
26 մայիսի 2025 թվական, N 91-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-դ մասի՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի մայիսի 26-ի արտահերթ թիվ 9 նիստի հետևյալ օրակարգը.
   1.1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2025 թվականի մայիսի 26-ի արտահերթ թիվ 9 նիստի օրակարգը հաստատելու մասին.
   1.2 ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ 2025 թվականի մայիսի 13-ին տեղացած կարկուտի պատճառով տուժած քաղաքացիներին պարահատանյութով աջակցելու նպատակով Ալավերդի համայնքի բյուջեից գումար հատկացնելու մասին.
   1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 28 ապրիլի 2025 թվականի՝ ««ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» թիվ 67-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.
   1.4 Գույքի նվիրատվության մասին.
   1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային մասհանումների (ռոյալթի) ծախսման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշումն ընդունվեց.

		ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ			

2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
10.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ			
15.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
16.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., մայիսի 26,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
26 մայիսի 2025 թվական, N 92-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ ՏԵՂԱՑԱԾ ԿԱՐԿՈՒՏԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՏՈՒԺԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹՈՎ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման» համայնքային հանձնաժողովի կողմից կազմված՝ «Կարկուտի հետևանքով պատճառված վնասների ծավալների նախնական գնահատման» արձանագրությունը և համապատասխան ակտը՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Տալ համաձայնություն և թույլատրել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի բյուջեից 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ հատկացնել 2025 թվականի մայիսի 13-ին տեղացած կարկուտի պատճառով տուժած քաղաքացիներին պարարտանյութով աջակցելու համար:
2. Հանձնարարել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել պարարտանյութի գնման գործընթացը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			

5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
10.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
15.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
16.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., մայիսի 26,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2025 թվական, N 93-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 28 ԱՊՐԻԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ՝ ««ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 67-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 28 ապրիլի 2025 թվականի՝ ««ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 67-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			

6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
10.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
15.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
16.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., մայիսի 26,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
26 մայիսի 2025 թվական, N 94-Ա

ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով՝

համայնքի ավագանին ***որոշում է***.

1. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի՝ 2024 թվականի սուբվենցիոն ծրագրով ձեռք բերած թվով 5 ավտոբուսները՝ համաձայն հավելվածի, սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՈԲՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ ապահովել «ԱԼԱՎԵՐԴՈՒ ԱՎՏՐԲՈՒՍ» փակ բաժնետիրական ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			

8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
10.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ԶԱԽԱՐՈՎ			
15.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
16.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., մայիսի 26,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ՀԱՎԵԼՎԱԾ
Ալավերդի համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 26-ի N 94-Ա որոշման

Ց Ա Ն Կ

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը՝ 10 նիշի մակարդակով***	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը***	Չափի միավորը***	Քանակը***	Արժեքը (դրամ)	Այլ տեղեկություններ**
			ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ				
1.	87029011900	Ավտոբուսներ — միջքաղաքային ավտոբուսներ	Նույնականացման համարը՝ LDYGCS8V6S0043302 Zhong Tong Մոդելը՝ LCK6860HGN, Տեղատարողությունը առնվազը 22+1 նստատեղերի առկայություն (ներառյալ վարորդի 1 նստատեղը և առանց հաշմանդամի սայլակի առկայության), առնվազը 37 կանգնած ուղևորների տեղափոխման հնարավորություն: Դասը՝ միջին տեղատարողությամբ, եվրո 5 էկոլոգիական ստանդարտի չափանիշներով:	հատ	1	35900000	
2.	87029011900	Ավտոբուսներ — միջքաղաքային ավտոբուսներ	Նույնականացման համարը՝ LDYGCS8V8S0043303 Zhong Tong Մոդելը՝ LCK6860HGN, Տեղատարողությունը առնվազը 22+1 նստատեղերի առկայություն (ներառյալ վարորդի 1 նստատեղը և առանց հաշմանդամի սայլակի առկայության), առնվազը 37 կանգնած ուղևորների տեղափոխման հնարավորություն: Դասը՝ միջին տեղատարողությամբ, եվրո 5 էկոլոգիական ստանդարտի չափանիշներով:	հատ	1	35900000	

3.	87029011900	Ավտոբուսներ — միջքաղաքային ավտոբուսներ	Նույնականացման համարը՝ LDYGCS8VXS0043304 Zhong Tong Մոդելը՝ LCK6860HGN, Տեղատարողությունը առնվազը 22+1 նստատեղերի առկայություն (ներառյալ վարորդի 1 նստատեղը և առանց հաշմանդամի սայլակի առկայության), առնվազը 37 կանգնած ուղևորների տեղափոխման հնարավորություն: Դասը՝ միջին տեղատարողությամբ, եվրո 5 էկոլոգիական ստանդարտի չափանիշներով:	հատ	1	35900000	
4.	87029011900	Ավտոբուսներ — միջքաղաքային ավտոբուսներ	Նույնականացման համարը՝ LDYGCS8V1S0043305 Zhong Tong Մոդելը՝ LCK6860HGN, Տեղատարողությունը առնվազը 22+1 նստատեղերի առկայություն (ներառյալ վարորդի 1 նստատեղը և առանց հաշմանդամի սայլակի առկայության), առնվազը 37 կանգնած ուղևորների տեղափոխման հնարավորություն: Դասը՝ միջին տեղատարողությամբ, եվրո 5 էկոլոգիական ստանդարտի չափանիշներով:	հատ	1	35900000	
5.	87029011900	Ավտոբուսներ — միջքաղաքային ավտոբուսներ	Նույնականացման համարը՝ LDYGCS8V3S0043306 Zhong Tong Մոդելը՝ LCK6860HGN, Տեղատարողությունը առնվազը 22+1 նստատեղերի առկայություն (ներառյալ վարորդի 1 նստատեղը և առանց հաշմանդամի սայլակի առկայության), առնվազը 37 կանգնած ուղևորների տեղափոխման հնարավորություն: Դասը՝ միջին տեղատարողությամբ, եվրո 5 էկոլոգիական ստանդարտի չափանիշներով:	հատ	1	35900000	
Ընդամենը						179500000	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2025 թվական, N 95-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ (ՌՈՅԱԼԹԻ) ԾԱԽՍՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1358-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 2-րդ կետով և հաշվի առնելով Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային մասհանումների (ռոյալթի) ծախսման 2025 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			

7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
10.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ԶԱԽԱՐՈՎ			
15.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			
16.	ԱՐԱՄԱՅԻՍ	ԽԱՆԴԱՄԻՐՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2025թ., մայիսի 26,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված
Ալավերդի համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 26-ի N 95-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ (ՌՈՅԱԼԹԻ) ԾԱԽՍՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿ (ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿՄԱՆ)

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Արժեք (հազար դրամ)	Ծանոթություն
1	**Բաղադրիչ 1**	**92 718,65**	
1.1.	*Շնող բնակավայրի ճանապարհների վերանորոգում՝ ասֆալտապատմամբ*	*53 820,85*	
1.2.	*Թեղուտ բնակավայրի ճանապարհների վերանորոգում՝ ասֆալտապատմամբ*	*12 140,72*	
1.3.	*Ճոճկան բնակավայրի ճանապարհների վերանորոգում՝ . փուխ քարով սալարկմամբ*	*26 757,08*	
2	**Բաղադրիչ 2**	**212 579,05**	
2.1.	*Ալավերդի բնակավայրի լճերի այգու վերակառուցում*	*158 033,94*	
2.2.	*Ախթալա բնակավայրում մարզահրապարակ / հանգստի գոտու կառուցում*	*54 545,12*	
	Ընդամենը	**305 297,70**	

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱՖԻԹ ՂՐԻՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ.
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ (ՌՈՅԱԼԹԻ)
ԾԱԽՍՄԱՆ

ԱԼԱՎԵՐԴԻ 2025Թ

Ծրագրի նկարագրությունը

Բաղադրիչ 1

Ալավերդի խոշորացված համայնքի 29 բնակավայրերից չորսը հանդիսանում են ռոյալթի վճարած կազմակերպությունների ազդակիր բնակավայրեր: Համայնքի բնակավայրերի ճանապարհների ներկա վատ վիճակը վարորդների համար անհարմարությունների ու ֆինանսական կորուստների պատճառ է դառնում: Դժվարություններ են ստեղծում համայնքի բնակավայրերի բնակիչների տեղաշարժման, գյուղատնտեսական աշխատանքների պատշաճ կազմակերպման, ինչպես նաև շտապ բուժօգնության ավտոմեքենաների արագ տեղաշարժի համար: Բացի այդ, ճանապարհների անմխիթար վիճակը լուրջ դժվարություններ է ստեղծում նաև ենթակառուցվածքների հասանելիության և համայնքային սպասարկում իրականացնող ծառայությունների համար (աղբահանություն, կոմունալ սպասարկում և այլն): Խնդիրն էլ ավելի ցայտուն է դառնում անձրևային եղանակին և ձմեռային պայմաններում, երբ հորդառատ անձրևների կամ ձյան պատճառով հիշյալ ճանապարհները դառնում են գրեթե անանցանելի՝ արդարացիորեն առաջ բերելով բնակիչների դժգոհությունը:

Միջոցառում 1

Ազդակիր Շնող բնակավահրում ներկայիս վիճակը շտկելու նպատակով հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 01.09.2022թ. թիվ 1370-Ն որոշման Հավելվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի «ա.» պարբերությունը (համայնքային նշանակության ճանապարհների կառուցում և վերանորոգում) համայնքը նախատեսում է 2025 թվականին ասֆալտապատմամբ կապիտալ վերանորոգել Ալավերդի համայնքի Շնող բնակավայրի 1-ին փողոցի 2-րդ նրբացքը (0.236 կմ), 6-րդ փողոցը (0.360 կմ), 15-րդ փողոցը (0.233 կմ):

Ալավերդի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի զարգացման խոչընդոտներ և դժվարություններ բաժնում որպես համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտ նշվել է ներբնակավայրային ճանապարհների անբարեկարգ վիճակը: Այս խնդիրների լուծմանն է ուղղված ծրագրի բաղադրիչ 1-ի միջոցառում 2-ով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Միջոցառում 2

Ազդակիր Թեղուտ բնակավայրում ներկայիս վիճակը շտկելու նպատակով հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 01.09.2022թ. թիվ 1370-Ն որոշման Հավելվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի «ա.» պարբերությունը (համայնքային նշանակության ճանապարհների կառուցում և վերանորոգում) համայնքը նախատեսում է 2025 թվականին ասֆալտապատմամբ կապիտալ վերանորոգել Ալավերդի համայնքի Թեղուտ բնակավայրի 1-ին փողոցի 2-րդ փակուղին (0,177 կմ):

Ալավերդի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի զարգացման խոչընդոտներ և դժվարություններ բաժնում որպես համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտ նշվել է ներբնակավայրային ճանապարհների անբարեկարգ վիճակը: Այս խնդիրների լուծմանն է ուղղված ծրագրի բաղադրիչ 1-ի միջոցառում 2-ով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Միջոցառում 3

Ազդակիր ճոճկան բնակավայրում ներկայիս վիճակը շտկելու նպատակով հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 01.09.2022թ. թիվ 1370-Ն որոշման Հավելվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի «ա.» պարբերությունը (համայնքային նշանակության ճանապարհների կառուցում և վերանորոգում) համայնքը նախատեսում է 2025 թվականին տուֆ քարով սալարկմամբ վերանորոգել ճոճկան բնակավայրի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքը (0,172 կմ) և 2-րդ փողոցը (0,120 կմ):

Ալավերդի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի զարգացման խոչընդոտներ և դժվարություններ բաժնում որպես համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտ նշվել է ներբնակավայրային ճանապարհների անբարեկարգ վիճակը: Այս խնդիրների լուծմանն է ուղղված ծրագրի բաղադրիչ 1-ի միջոցառում 3-ով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Բաղադրիչ 2

Միջոցառում 1

Ալավերդի համայնքի Ալավերդի բնակավայրում առկա է ընդամենը մեկ փոքր բակային մարզահրապարակ: Այս պատճառով բնակչության զգալի հատվածը զրկված է առողջ ապրելակերպի, ֆիզիկական ակտիվության և լիարժեք հանգստի կազմակերպման հնարավորությունից: Հատկապես փակ տարածքներից դուրս հանրային հանգստի և զբոսանքի գոտիների բացակայությունը բացասաբար է անդրադառնում բնակիչների ֆիզիկական և հոգեբանական առողջության վրա:

Խնդիրը լուծելու նպատակով հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 01.09.2022թ. թիվ 1370-Ն որոշման Հավելվածի 2-րդ կետի 9-րդ ենթակետի «բ.» պարբերությունը (այգիների, պուրակների բարեկարգում և կառուցում) ծրագրի բաղադրիչ 2-ի միջոցառում 1-ով նախատեսում է 2025 թվականին Ալավերդի բնակավայրում վերակառուցել շուրջ 4620 քմ այգին:

Այգու վերակառուցման արդյունքում կստեղծվի բարեկարգ, կանաչապատ և մարդկանց համար բաց ու հասանելի հանրային տարածք, որը միաժամանակ կնպաստի առողջ կենսակերպի խթանմանը (այդ թվում՝ զբոսանքների, վազքի և թեթև ֆիզիկական ակտիվության հնարավորությամբ), սոցիալական ներգրավվածության ամրապնդմանը և հանրային միջավայրի որակի բարձրացմանը: Նախագծման փուլում հատուկ ուշադրություն է դարձվում նաև օդի որակի բարելավմանն ուղղված լուծումներին, մասնավորապես՝ կանաչապատման ծավալների ընդլայնմանը, փոշեկլանիչ հատկություններ ունեցող ծառատեսակների ու թփերի կիրառմանը, ինչը կնպաստի օդում փոշու քանակի նվազեցմանը և կբարելավի շրջակա միջավայրը:

Ալավերդի համայնքի 2023-2027թթ հնգամյա զարգացման ծրագրում որպես համայնքի զարգացման անմիջական նպատակներ են սահմանվել համայնքում մարզական կյանքի ակտիվացումը, առողջ ապրելակերպի և ֆիզիկական կուլտուրայի խթանումը, ինչպես նաև հնգամյա ժամանակահատվածում իրականացվելիք ծրագրերի և միջոցառումների մեջ ներառված են Ալավերդի համայնքի տարածքում զբոսայգիների, մարզահրապարակների և խաղահրապարակների կառուցումը, որի իրականացմանն էլ

ուղղված է ծրագրի բաղադրիչ 2-ի միջոցառում 1-ով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Միջոցառում 2

Ալավերդի համայնքի Ախթալա բնակավայրում զբոսայգիներ և մարզահրապարակներ չկան: Այս պատճառով Ախթալա բնակավայրում բնակիչները զրկված են սպորտով զբաղվելու և ակտիվ հանգիստը կազմակերպելու հնարավորությունից: Առողջ և հանգիստ ժամանցի, ֆիզիկական ակտիվության և սպորտով զբաղվելու հնարավորության բացակայության պայմաններում տուժում է բնակիչների ընդհանուր առողջական վիճակը:

Խնդիրը լուծելու նպատակով հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 01.09.2022թ. թիվ 1370-Ն որոշման Հավելվածի 2-րդ կետի 8-րդ ենթակետի «ա.» պարբերությունը (սպորտային նշանակության մարզական և խաղային հրապարակների, խաղադաշտերի կառուցում և վերանորոգում) ծրագրի բաղադրիչ 2-ի միջոցառում 2-ով նախատեսում է 2025 թվականին Ախթալա բնակավայրում կառուցել շուրջ 780 քմ մարզահրապարակ/հանգստի գոտի:

Ալավերդի համայնքի 2023-2027թթ հնգամյա զարգացման ծրագրում որպես համայնքի զարգացման անմիջական նպատակներ են սահմանվել համայնքում մարզական կյանքի ակտիվացումը, առողջ ապրելակերպի և ֆիզիկական կուլտուրայի խթանումը ինչպես նաև հնգամյա ժամանակահատվածում իրականացվելիք ծրագրերի և միջոցառումների մեջ ներառված են Ալավերդի համայնքի տարածքում զբոսայգիների, մարզահրապարակների և խաղահրապարակների կառուցումը, որի իրականացմանն էլ ուղղված է ծրագրի բաղադրիչ 2-ի միջոցառում 2-ով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Ծրագրի նպատակները և արդյունքները

Նպատակ

Բաղադրիչ 1

Միջոցառում 1

Ազդակիր Շնող բնակավայրում ճանապարհային ցանցի բարելավում և անվտանգ երթևեկության ապահովում:

Միջոցառում 2

Ազդակիր Թեղուտ բնակավայրում ճանապարհային ցանցի բարելավում և անվտանգ երթևեկության ապահովում:

Միջոցառում 3

Ազդակիր Ճոճկան բնակավայրում ճանապարհային ցանցի բարելավում և անվտանգ երթևեկության ապահովում:

Բաղադրիչ 2

Միջոցառում 1

Հանրային հանգստի և ֆիզիկական ակտիվության հնարավորությունների ստեղծում:

Միջոցառում 2

Առողջ ապրելակերպի խթանում, հանգստի և ժամանցի ապահովում:

Ծրագրի իրականացման արդյունքում.

Բաղադրիչ 1

<u>Միջոցառում 1</u>

- ✓ Ազդակիր Շնող բնակավայրում կբարձրանա բնակչության տեղաշարժի հարմարավետության մակարդակը,
- ✓ Ազդակիր Շնող բնակավայրում կնվազեն տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծախսերը,
- ✓ Ազդակիր Շնող բնակավայրում կապահովվի համայնքային նշանակության ենթակառուցվածքների հասանելիությունն ու արդյունավետ շահագործումը:

<u>Միջոցառում 2</u>

- ✓ Ազդակիր Թեղուտ բնակավայրում կբարձրանա բնակչության տեղաշարժի հարմարավետության մակարդակը,
- ✓ Ազդակիր Թեղուտ բնակավայրում կնվազեն տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծախսերը,
- ✓ Ազդակիր Թեղուտ բնակավայրում կապահովվի համայնքային նշանակության ենթակառուցվածքների հասանելիությունն ու արդյունավետ շահագործումը:

<u>Միջոցառում 3</u>

- ✓ Ազդակիր Ճոճկան բնակավայրում կբարձրանա բնակչության տեղաշարժի հարմարավետության մակարդակը,
- ✓ Ազդակիր Ճոճկան բնակավայրում կնվազեն տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծախսերը,
- ✓ Ազդակիր Ճոճկան բնակավայրում կապահովվի համայնքային նշանակության ենթակառուցվածքների հասանելիությունն ու արդյունավետ շահագործումը:

Բաղադրիչ 2

<u>Միջոցառում 1</u>

- ✓ Ալավերդի բնակավայրում կստեղծվեն նպաստավոր և անվտանգ պայմաններ առողջ ապրելակերպի, հանգստի, զբոսանքի և ժամանցի համար՝ խթանելով բնակչության ֆիզիկական և հոգեկան բարեկեցությունը:
- ✓ Վերակառուցված այգին կծառայի որպես հանրային կանաչ տարածք՝ նպաստելով օդի որակի բարելավմանը, մասնավորապես՝ փոշու նվազեցմանն ու մթնոլորտային աղտոտվածության մեղմացմանը:
- ✓ Համայնքը կունենա բարեկարգ, կանաչապատ և գրավիչ համայնքային միջավայր, որն ուղղված կլինի ինչպես բնակիչների կենսապայմանների բարելավմանը, այնպես էլ զբոսաշրջային գրավչության բարձրացմանը:
- ✓ Կխթանվի սոցիալական ներգրավվածությունը և համայնքային կապերի ամրապնդումը՝ ստեղծելով շփման, համատեղ ժամանակ անցկացնելու և հանրային ակտիվության տարածք:

Միջոցառում 2

- ✓ Ախթալա բնակավայրում կստեղծվի սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար ֆիզիկական դաստիարակության ու ֆիզիկական կուլտուրայով զբաղվելու հնարավորության հասանելիություն,
- ✓ Ախթալա բնակավայրում կստեղծվեն նպաստավոր և անվտանգ պայմաններ առողջ ապրելակերպի, հանգստի և ժամանցի համար,
- ✓ համայնքը կունենա բարեկարգ և բարելավված համայնքային միջավայր:

Ծրագրի շահառուները

Ծրագրի ուղղակի շահառուները Ալավերդի համայնքի Շնող, Թեղուտ, Ճոճկան, Ալավերդի և Ախթալա բնակավայրերի բնակիչներն են՝ 26673 մարդ, որից՝ 12983-ը տղամարդ և 13690-ը կին:

Բաղադրիչ 1

Միջոցառում 1

Ծրագրի 1-ին բաղադրիչի միջոցառում 1-ի ուղղակի շահառուները համայնքի Շնող բնակավայրի թվով 2978 բնակիչներն են (1515 տղամարդ և 1463 կին), ովքեր կօգտվեն համայնքի բարեկարգ ճանապարհներից:

Միաժամանակ, ծրագրի 1-ին բաղադրիչի միջոցառում 1-ի ժամանակավոր շահառու կհանդիսանան շինարարության ոլորտի այն աշխատակիցները ովքեր ընդգրկված կլինեն ճանապարհների վերանորգման գործում:

Միջոցառում 2

Ծրագրի 1-ին բաղադրիչի միջոցառում 2-ի ուղղակի շահառուները համայնքի Թեղուտ բնակավայրի թվով 834 բնակիչներն են (431 տղամարդ և 403 կին), ովքեր կօգտվեն համայնքի բարեկարգ ճանապարհներից:

Միաժամանակ, ծրագրի 1-ին բաղադրիչի միջոցառում 2-ի ժամանակավոր շահառու կհանդիսանան շինարարության ոլորտի այն աշխատակիցները, ովքեր ընդգրկված կլինեն ճանապարհների վերանորգման գործում:

Միջոցառում 3

Ծրագրի 1-ին բաղադրիչի միջոցառում 3-ի ուղղակի շահառուները համայնքի Ճոճկան բնակավայրի թվով 1997 բնակիչներն են (1028 տղամարդ և 969 կին), ովքեր կօգտվեն համայնքի բարեկարգ ճանապարհներից:

Միաժամանակ, ծրագրի 1-ին բաղադրիչի միջոցառում 3-ի ժամանակավոր շահառու կհանդիսանան շինարարության ոլորտի այն աշխատակիցները, ովքեր ընդգրկված կլինեն ճանապարհների վերանորգման գործում:

Բաղադրիչ 2

Միջոցառում 1

Ծրագրի 2-րդ բաղադրիչի միջոցառում 1-ի ուղղակի շահառուները Ալավերդի բնակավայրի թվով 18175 բնակիչներն են (8759 տղամարդ և 9416 կին), ինչպես նաև բնակավայր այցելող զբոսաշրջիկները, ովքեր հնարավորություն կունենան ժամանակ

անցկացնել բարեկարգ, հարմարավետ և հասանելի հանրային հանգստի գոտում՝ զբոսանքի, շփման և հանգստի համար համապատասխան պայմաններում:

Իսկ ծրագրի 2-րդ բաղադրիչի միջոցառում 1-ի ժամանակավոր շահառու կհանդիսանան շինարարության ոլորտի այն աշխատակիցները, ովքեր ընդգրկված կլինեն այգու վերակառուցման գործում:

Միջոցառում 2

Ծրագրի 2-րդ բաղադրիչի միջոցառում 2-ի ուղղակի շահառուները Ախթալա բնակավայրի թվով 2690 բնակիչներն են (1250 տղամարդ և 1440 կին), ինչպես նաև բնակավայր այցելող զբոսաշրջիկները, ովքեր ֆիզիկական վարժություններով զբաղվելու, առողջ ապրելակերպ վարելու, լիարժեք հանգիստը կազմակերպելու հնարավորություն կունենան:

Իսկ ծրագրի 2-րդ բաղադրիչի ժամանակավոր շահառու կհանդիսանան շինարարության ոլորտի այն աշխատակիցները, ովքեր ընդգրկված կլինեն այգու վերակառուցման և մարզահրապարակ/հանգստի գոտու կառուցման գործում:

Ծրագրի իրականացման գործողությունները և ժամանակացույցը

Բաղադրիչ 1

Միջոցառում 1

Բաղադրիչ 1-ի միջոցառում 1-ը նախատեսվում է իրականացնել 01.06.2025թ.-25.12.2025թ. ժամանակահատվածում, որի ընթացքում նախատեսվում է կազմակերպել ծրագրի բաղադրիչ 1-ի միջոցառում 1-ով նախատեսված շինարարական աշխատանքների ձեռքբերման գնման գործընթացները, որի արդյունքում մրցութային ընթացակարգում հաղթած կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա Շնող բնակավայրում կվերանորոգվեն 0,829կմ ճանապարհներ՝ ասֆալտապատման միջոցով: Նշված ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար սահմանված կարգով կկազմակերպվեն հանձման-ընդունման գործընթացներ, որոնց արդյունքներով կազմված արձանագրությունների հիման վրա համայնքապետարանը կիրականացնի համապատասխան վճարումներ:

Միջոցառում 2

Բաղադրիչ 1-ի միջոցառում 2-ը նախատեսվում է իրականացնել 01.06.2025թ.-25.12.2025թ. ժամանակահատվածում, որի ընթացքում նախատեսվում է կազմակերպել ծրագրի բաղադրիչ 1-ի միջոցառում 2-ով նախատեսված շինարարական աշխատանքների ձեռքբերման գնման գործընթացները, որի արդյունքում մրցութային ընթացակարգում հաղթած կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա Թեղուտ բնակավայրում կվերանորոգվի 0,177կմ ճանապարհ՝ ասֆալտապատման միջոցով: Նշված ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար սահմանված կարգով կկազմակերպվեն հանձման-ընդունման գործընթացներ, որոնց արդյունքներով կազմված արձանագրությունների հիման վրա համայնքապետարանը կիրականացնի համապատասխան վճարումներ:

Միջոցառում 3

Բաղադրիչ 1-ի միջոցառում 2-ը նախատեսվում է իրականացնել 01.06.2025թ.-25.12.2025թ. ժամանակահատվածում, որի ընթացքում նախատեսվում է կազմակերպել

ծրագրի բաղադրիչ 1-ի միջոցառում 3-ով նախատեսված շինարարական աշխատանքների ձեռքբերման գնման գործընթացները, որի արդյունքում մրցութային ընթացակարգում հաղթած կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա ճոճկան բնակավայրում կվերանորոգվեն 0,292կմ ճանապարհներ՝ տուֆ քարով սալարկման միջոցով: Նշված ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար սահմանված կարգով կկազմակերպվեն հանձման-ընդունման գործընթացներ, որոնց արդյունքներով կազմված արձանագրությունների հիման վրա համայնքապետարանը կիրականացնի համապատասխան վճարումներ:

Բաղադրիչ 2

Միջոցառում 1

Բաղադրիչ 2-ի միջոցառում 1-ը նախատեսվում է իրականացնել 01.06.2025թ.-25.12.2025թ. ժամանակահատվածում, որի ընթացքում նախատեսվում է կազմակերպել կազմակերպել ծրագրի բաղադրիչ 2-ի միջոցառում 1-ով նախատեսված շինարարական աշխատանքների ձեռքբերման գնման գործընթացները, որի արդյունքում մրցութային ընթացակարգում հաղթած կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա կվերակառուցվի շուրջ 4620 քմ այգի: Նշված ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար սահմանված կարգով կկազմակերպվեն հանձման-ընդունման գործընթացներ, որոնց արդյունքներով կազմված արձանագրությունների հիման վրա համայնքապետարանը կիրականացնի համապատասխան վճարումներ:

Միջոցառում 2

Բաղադրիչ 2-ի միջոցառում 2-ը նախատեսվում է իրականացնել 01.06 2025թ.-25.12.2025թ. ժամանակահատվածում, որի ընթացքում նախատեսվում է կազմակերպել կազմակերպել ծրագրի բաղադրիչ 2-ի միջոցառում 1-ով նախատեսված շինարարական աշխատանքների ձեռքբերման գնման գործընթացները, որի արդյունքում մրցութային ընթացակարգում հաղթած կազմակերպության հետ կնքված պայմանագրի հիման վրա կկառուցվի շուրջ 780 քմ մարզահրապարակ/հանգստի գոտի: Նշված ժամանակահատվածում կատարված աշխատանքների համար սահմանված կարգով կկազմակերպվեն հանձման-ընդունման գործընթացներ, որոնց արդյունքներով կազմված արձանագրությունների հիման վրա համայնքապետարանը կիրականացնի համապատասխան վճարումներ:

Ծրագրի ավարտից հետո ՀՀ կառավարության 04.08.2022թ. «Համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությանը ներկայացվող պահանջները և հաշվետվության ձևաչափը հաստատելու մասին» թիվ 1198-Ն որոշման Հավելված 1-ի 2-րդ կետով սահմանված ժամկետում կկազմվի և կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվություն:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ծախսեր

Ալավերդի համայնքի համայնքային մասհանումների (ռոյալթի) ծախսման 2025 թվականի ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 305297700 ՀՀ դրամ (նախնական հաշվարկը (ֆինանսական գնահատականը) կցվում է), որը կֆինանսավորվի համայնքային մասհանումների միջոցներից: Այս ծախսերն իրենց մեջ ներառում են Շնող,

Թեղուտ և Ճոճկան բնակավայրերի ճանապարհների վերանորոգման, Ալավերդի բնակավայրում այգու վերակառուցման և Ախթալա բնակավայրում մարզահրապարակ/հանգստի գոտու կառուցման շինարարական աշխատանքների արժեքները:

Շնող, Թեղուտ և Ճոճկան բնակավայրերի ճանապարհների վերանորոգման, Ալավերդի բնակավայրում այգու վերակառուցման և Ախթալա բնակավայրում մարզահրապարակ/հանգստի գոտու կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման աշխատանքների, շինարարական աշխատանքների հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայությունների ծախսերը կֆինանսավորվեն Ալավերդի համայնքի բյուջեից:

Ծրագրի իրականացման հիմքերը

Ալավերդի համայնքի համայնքային մասհանումների (ռոյալթի) ծախսման ծրագիրը կազմվել է «Համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, դրանց առաջնահերթությունները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշման 2-ր կետի 6-րդ ենթակետի ա. պարբերության, 8-րդ ենթակետի ա. պարբերության, 9-րդ ենթակետի բ. պարբերության, «Համայնքային մասհանումների ծախսման ծրագիրը կամ ծրագրի փոփոխությունները տարածքային կառավարման բնագավառի լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1358-Ն որոշման, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ Օրենքի 2-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ Օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Ծրագրով նախատեսված միջոցառումները ներառված են Ալավերդի համայնքի 2023-2027թթ հնգամյա զարգացման ծրագրում, որը հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում:

Ծրագրի հնարավոր ռիսկերը

Ծրագրի հնարավոր ռիսկ կարող է հանդիսանալ անհաղթահարելի ուժի ազդեցությունը, որի պատճառով ծրագրի իրականացումը կարող է անհնարին դառնալ:

Համայնքն ունի համանման ծրագրեր արդյունավետ իրականացնելու տարիների փորձ, ինչը հնարավորություն կտա ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր առաջանալիք խնդիրներն արդյունավետ հաղթահարել:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱՎԻԹ ՂՈՒԿԱՍՅԱՆ